

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

Ինն երորդ տարին է, որ ամռանը Ամերիկայից մայր հայրենիք են հյուրընկալվում Եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության անդամները՝ ուխտի գալով Մայր Աթոռ ս. Էջմիածին և միաժամանակ հետևելու Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած դասընթացներին:

18 հունիսի, կիրակի...

Ուրախության և խորը հուզումի արցունքներով էր լցված այդ օրը պանդուխտ հայ երիտասարդների հոգիները, որոնք եկել էին հեռավոր Ամերիկայից՝ հայրենիքի սերը իրենց մատղաշ սրտերում, ս. Էջմիածնի պաշտամունքը իրենց հոգիներում:

Այսօր նրանց երբեմնի երազանքներն իրականություն են դարձել, իրականություն, որը անփոխարինելի է նրանցից յուրաքանչյուրի համար:

Նրանք հյուրն էին Էջմիածնի, հյուրը՝ Մայր Աթոռի:

Օտար ափերում ծնված այդ հայորդիներն այսօր առաջին անգամ իրենց սեփական ոտքերով քայլեցին հայրենի հողի վրա, զգացին նրա կենարար շունչը և ուժ ու եռանդ ստացած, հպարտությունը համակեց նրանց բոլորին:

Եվ այս առթիվ ինչպե՞ս կարելի է չհիշատակել՝ սրանից ավելի քան 1500 տարիներ առաջ գոյություն ունեցող «Արշակ և Շապուհ»-ի զրուցապատումը, որն այսօր էլ հնչում է նույնքան արդիական և հարազատ, ըստ որի Արշակը Տիզբոնում երբ քայլում էր հատակը հայկական հողով լցված գորգերի վրայով, ավելի էր ոգևորվում և մի առանձին կորով էր ստանում:

Եվ ահա այդպիսի ներշնչանք և կորով էին ստացել այսօր հարազատ զավակները հայրենի հողի վրա, քանի որ հարազատի պես հպարտորեն և կարոտով նրանց էր նայում ալեհեր Արարատն իր ձյունապատ գագաթներով:

Երիտասարդների այս տարվա խումբը բաղկացած էր 14 պատանիներից և աղջիկ-



ներից, որոնց ղեկավարում էին տ. Արշեն վրդ. Այվազյանը և տ. Կարապետ քհն. Քյոշաբյանը:

Հայրենիքում հունիսի 18-ից մինչև հուլիսի 10-ը հյուրընկալման օրերին նրանք իջևանեցին քառագաթ Արագածի փեշին կառուցված «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում, որպես Մայր Աթոռի հյուրեր, ուր երիտասարդների համար կար ամեն հարմարություններ հանգստի և բարեկեցության համար:

Այդ օրերին ամերիկահայ երիտասարդները հետևեցին, վերը նշված, Սիյուռբահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած հայոց լեզվի, երգ-երաժշտության, պարի դասընթացներին: Ունկնդրեցին դասախոսություններ հայկական կերպարվեստի, հայ ժողովրդի պատմության, հայկական ժողովրդական և դասական երաժշտության և հայ մշակույթի այլ ճյուղերի վերաբերյալ: Ինչպես օրինակ՝ «Հայ ժողովրդի կազմավորումը», «Հայ ժողովրդական մշակույթը 5-րդ դարում», «Հայկական երաժշտություն—միջնադարյան տաղեր», «Հայկական ժողովրդական և գուսանական երաժշտություն» և «Հայ ժողովրդի նպաստը աշխարհաքաղաքակրթության» թեմաներով:

Եկեղեցասեր երիտասարդները հայրենիքում ծանոթացան Հայկական լեռնաշխարհի պատմական հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների, ժամանակակից կառույցների, գիտական ու մշակութային առաջընթացի հետ: Միաժամանակ հմայվեցին հայրենի բնաշխարհի բնական ինքնատիպ գեղեցկություններով՝ վերձիգ և անմատչելի ժայռերով, անհատակ ձորերով և կաթնափրփուր գետերով:

Այդ ընթացքում նրանք մոտիկից ճանաչեցին իրենց բարերի երկիր Հայաստանը, որտեղ իրենց պապերը տասնյակ դարերի ընթացքում կռիվ են մղել բարի դեմ, արյուն-քրտինք են թափել, բարից հաց են բամբել և պահպանել իրենց ֆիզիկական գոյությունը:

Քարը հազարամյակների ընթացքում դարձել է հայ ժողովրդի ուղեկիցը, մտել նրա պատմության, ճարտարապետության, գրականության և մշակույթի տաճարը:

Քարը հայի ձեռքում հուշարձան է դարձել: Քարի առաջ ծունկը դրել և աղոթքի խոսքեր է մրմնջացել պանդուխտ որդուն սպասող մայրը: Քարը դարձել է նրա պաշտամունքի առարկան, քարին է նա հաղորդել իր թշվառ վիճակը: Հազարամյակներ առաջ Արգիշտի Առաջինի հրամանով քարի վրա է արձանագրվել մեր հնագույն քաղաքի՝ Էրեբունիի ծննդյան վկայականը:

Հայրենաբաղձ երիտասարդները հյուրընկալության օրերին եղան կապուտաչյա Սևանա լճում, Ծիծեռնակաբերդում, Սարդարապատում, Էրեբունիում, Հայաստանի պետական ձեռագրաց Մատենադարանում, Բյուրականի աստղադիտարանում: Ուխտի գնացին ս. Գեղարդի (Այրիվանք), Խորվիրապի, Գոշավանքի նշանավոր վանքերը, այցելեցին ս. Հռիփսիմե, ս. Գայանե, ս. Շողակաթ, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց, Կարմրավոր, Մուղնու ս. Գևորգ, Աշտարակի ս. Մարիանե պատմական եկեղեցիներ:

Ամեն օր, ժամը 15-ին, երիտասարդ ուխտավորների այս խումբը Մայր Աթոռի վանական սեղանատանն ուրախությամբ ճաշակում էր ս. Էջմիածնի աղն ու հացը:

Նրանք Միածնաէջ Մայր տաճարում ներկա եղան պատարագների և հաղորդություն ստացան:

Մայր Աթոռ ս. Էջմիածնում երիտասարդներին երեք անգամ հարազատ հոր պես ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսը, որը բարեհաճեց զրուցել նրանց հետ, հետաքրքրվեց նրանց կյանքով և գործունեությամբ:

Ընդունելություններից մեկի ժամանակ ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության անունից որդիական ջերմ շնորհակալական խոսք ասաց խմբի ղեկավար տ. Արշեն վրդ. Այվազյանը, իսկ երիտասարդների անունից հոգեբուխ և սրտառուչ շնորհակալական ուղերձով հանդես եկավ Պարույր Տեր-Մկրտչյանը:

Ահա թե ինչ ասաց նա.

«Վեհափառ Տեր,

Մեր խումբին կողմեն նախ կուզեմ շնորհակալություն հայտնել Ձեզի, Ձեր հայրական խնամքին և հոգածության համար:

Մեզի համար առանձնաշնորհ մրն է ելլալ սուրբ Էջմիածնի հովանիին ներքև: Մեր բնակությունը «Հայկաշէն»-ի փառավոր հարմարությանց մեջ մեզի տվավ առիթը հանգստանալու ֆիզիկապես, որպեսզի կարելի ըլլա տեսնել մայր հայրենիքի տեսարժան վայրերը և մեր պապենական մշակութային ու հոգևոր ժառանգությունը:

Հագեպես զորացած ենք տեսնելով մեր հայրերու թողած անփոխարինելի հարստությունը:

Մեր ազգի հոգևոր կյանքի լույս սուրբ Էջմիածինը, մեր հոյակերտ տաճարները, մեր պատմական վանքերը հարստացուցին մեզ հոգեպես: Նաև մեր այցելությունները Սևանա լիճ, Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, Մատենադարան, մեր թանգա-

րանները և այլ պատմական հուշարձաններ մեզի հաղորդ դարձուցին մեր անցյալին:

Վեհափառ Տեր,

Մեր մտքին մեջ անջնջելի պիտի մնա երեք շաբաթներու ընթացքին մեր ստացած տպավորությունները: Բայց մանավանդ մեր ամենօրյա այցը սուրբ Էջմիածին, որ ավելի ևս գեղեցկացած է Ձեր ջանքերուն շնորհիվ:

Մեզի համար Դուք կամուրջն եք մեր անցյալին, ներկային և ապագային միջև: Ձեզի կմաղթենք առողջ և երկար տարիներ»:

Վերջում խմբի անունից, առաջինը լինելով, խումբը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝ 70-ամյակի սեմին, և ի հարգանս որդիական ջերմ սիրո աջահամբույրով հանձնեցին գեղեցիկ հուշանվեր:

Երեկույթի ավարտին Վեհափառ Հայրապետը բաշխեց Իր հայրական օրհնությունները, թելադրեց՝ ուր էլ որ լինեն, իրենց սրտերում միշտ վառ պահեն Մայր Աթոռից և հայրենիքից ստացած տպավորությունները:

Այնուհետև երիտասարդները Վեհափառից աջահամբույրներով ստացան փոքրիկ հուշանվերներ:

Երիտասարդները հյուրընկալության օրերին դիտեցին նաև մի շարք պատմական և տուն-թանգարաններ, ֆիլմեր, ներկայացումներ, որոնցից հարուստ հունձ հավաքեցին:

Վերջապես մոտեցավ բոլորի համար անցանկալին:

Մեկնումի պահն է... Բոլորի համար ցավ է բաժանվել մայր հայրենիքից:

Նրանք մեկնում են՝ իրենց սրտերում տանելով մայր հայրենիքի մի մասը և ձեռքերում Արարատից ձյուն և Արաքսից՝ ջուր՝ ամոքելու համար իրենց հարազատներին:

Նրանցից յուրաքանչյուրի ցանկությունն էր՝ փորձել գուրգուրել այն ամեն մի բոպեն, որ անցկացրեցին մայր հայրենիքում՝ պահպանելով այն իրենց հոգու խորքերում, որպեսզի այդ գեղեցիկ ապրումները, որ իրենք ունեցան Մայր Աթոռում և մայր հայրենիքում, մնան իրենց ամենասրտամոտ հիշատակները հավիտյան:

Վ. Ս. Ա.